

մարդւոյ կարօտ է հայրենական ներշնչման մը. եւ որպէս զի հայրենասիրութիւնն չմոլորի եւ յետ չմնայ, պէտք է որ առաջնորդ ունենայ զիմաստութիւն, նեցուկ՝ զհաւատս, եւ պսակ՝ զյաւիտենականն ճշմարտութիւն:

— Ո՛վ Հայակալ, ո՛վ Հայ պատանիք, այդէկ քաղաքացի ըլլալու համար՝ պէտք է քննել եւ սովորել զհայրենիս: Այս է առաջին ու սուսն յետ ուսման հանդերձեալ կենաց, Գննեցէք եւ սովորեցէք ուրեմն այդ ազնիւ եւ բարեբեր Հայաստանը, իրբեւ հայրենիք ձեր եւ դայեակ ամենայն աշխարհի... — քննեցէք այդոր բնակազմութիւնը, քննեցէք այդոր բարոյականը. քննեցէք այդոր բարգաւաճումը ի հարուստ լեզուին, որ ապահով գրաւական մ'է բազմատեսակ արկածներով հնծուած գրականութեանը... — քննեցէք զայն վերջապէս՝ իր կրօնից զրտութեանը, եւ իր ծիսից վայելչութեանը մէջ: Այդ քննութիւնըդ, այդ ուսմունքը յորդոր ըլլան ձեզի աւելի քան զաւելի յարգելու զհայրենիս եւ մշակելու զայն՝ ըստ ամենայն նշանակութեան բանիս: Վասն զի այս իսկ է առաջին պատուէր Արարչին՝ ստրուած սու հայրն մարդկութեան, եւ տրուած բուն իսկ մեր երկրին մէջ. ԳՈՐԾԵԼ ԶՆԱ ԵՒ ՊԱՀԵԼ՝:

ՄԵՐՈՒ ՇԻՐԱԿՈՑ

1. Թուշեկ. — Բնաւ. Հայաստ. աշխարհի.

Հայկական Հանրապետութեան նախկին վարչապետ և Բ. Նախարար Վսեմ. Պարոն ԱՆԵՔՍԱՆԴ ԽԱՏԻՍԵԱՆ, ՎՍԵՄԱՇՈՒՔ ՏԻԿՆՈՂԵ հետ Օգոստոսի ութին, իրենց թանկագին այցելութիւնն ըրին Միթթարեան Միաբանութիւնս եւ Մուրատ-Պափայէշեան Դպրոցին: Մանրամասնութիւնք կու տանք մեր ընթերցողներին «Բազմապէս» յի յաջորդ թիւի մէջ:

Հ Ե Լ Է Ն Է

ՈՒՐԵՐԳՈՒԹԻՒՆ Ի ՀԻՆԳ ՀԱՆԴԵՍՍ

(Շար. տես. Բզմ. 1920, էջ 168)

Տ Ե Ո Ւ Լ Բ.

Հեկէն (արբրենայով՝ յուսանաւ տալո յորս կողմը կը նայի)

Գնացէր է... իսկ ես հոտ եմ... Բնէ ըրիր, հիքացեալ օրիորդ. դոստոր անգութ. միթէ ես հայրս ի մահ կը խաւած, միթէ չ'երթար, որպէս զի զինքն մատնէ ի ձեռս դահնաց. իսկ ես միթէ չ'էի՝ կրնար զիս միայն զոհելու, ծերակուտին վճիռն իրեն լռելով: Ա՛հ թշուառական (դէպ ի դռնը կը վագի). Հայր իմ, հայր իմ... (ականց կը դնէ) ախոս մեկնած է, ալ չ'եմ լսիր իւր ոտից ձայնը սա կամարաց տակ... գուցէ արդէն զինքն մատնած է... ա՛հ սիրելի ծնող, զքեզ անդունդին մէջ գահավիժեցի, զեւրեզմանիդ փոսը աղշիկդ իւր ձեռքն փորցն: ԶԱրտաւազդ ազատելով՝ մահս նոր, յաւիտենական եւ երջանիկ կեանք մ'իմն կը շնորհէր. դոս այժմ կը պահանջես, հայր, որ ապրիմ. սակայն քենէ գրկուելովս ալ այդ կեանքն մահ պիտի ըլլայ ինձ. ուրեմն ո՛ր որ ալ դառնամ, միշտ զմահ առջեւ պիտի գտնամ, ապա կ'ընտրեմ մեռնելի գնէզ երկուքդ ալ ազատելով: Օ՛հ չըթափառեմ հոտ, թերեւ կրնամ ի ժամանակին հասնելով, խլիւ հայրս դահնին տապալէն. իսկ եթէ ոչ, իւր հետ կը մեռնիմ: Այո՛, վագեմ... չըկեմ նամ հոտ, վասն զի զԱրտաւազդ մէյմը տեսնելէս ետեւ, ո՛հ խիտ դառն պիտի ըլլայ այնուհետեւ իրմէ բաժնուիլս... երթամ ուրեմն... (քանի մը քաշի տակով կը կայնի). ո՛վ երկինք, ծուռգուրներս կը դողան... նուաղիլ կ'զգամ... երթամ այդպէս՝ առանց որ զինքն վերջին անգամ մ'ալ տեսնեմ, առանց որ մէյմը վասն իմ կրած շղթայքը համբուրեմ, առանց որ իրեն անգամ մ'ալ ըսեմ «Արտաւազդ, զքեզ միշտ սիրեցի, զքեզ «միայն կը սիրեմ և զքեզ սիրելուս համար ահա» «մեռնելու կերթամ»»: Ո՛հ, ո՛վ կրած է իմ տանջանքս. յոր կողմն ալ որ դառնամ, միանգամայն յանցապարտ եմ. հաւատարիմ սիրական մնալ որ ուզեմ, հոն հայրս պիտի գլխատուի. սա տեղէս ալ կարող չ'եմ հեռանալու: Ա՛հ, սա երկու օրուս տագնապն և վիշտն զիս ալեւորեցին. վեշտասան զարնան ճակատիս վրայ ըրտուցած վարդերն ի բաց խլելով, հոն փչէ պսակ մը տեղաւորեցին: Սակայն կը մոտենայ ժամն՝ որ ամէն վիշտն և տագնապս պիտի դադարեցնէ. քնհատութիւն և արտասուք աշուտս լոյսը խաւարեցին, բոլոր մարմինս կ'այրի՝ իբր թէ հնոց մը հոն սըրտիս մէջ կրէի. բայց սա հուրն ալ պիտի մարի, և քիչ ատենէ հետոյց մը քառնայով՝ պիտի հանգչիմ փոսին մէջ... երթամ. (քանի մը քաշի կ'առա-

նուշ տկարութեամբ և դէպ ի շունտին խորր (նայելով). Թանա բարեաւ, սիրեցեալդ իմ Արտաւազդ, ապրէ՛ դու, ես կը մեռնիմ, միւսանգամ երկնից մէջ կը տեսնուինք: (Քանի մը քայլ կ'առնու միշտ տկարութեամբ. խորին շարայից շաւիշն կը լսուի, որ երթալով կը մօտենայ) Ո՛վ երկինք, շղթայից շաւիշն կը լսեմ... ստուեր մը սա կամարաց խորին դէպ ի հոս կը մօտենայ... ինքն ըլլալու է... աճապարեմք, փախչինք... այլ ծովագետներս կը թուխան... ո՛հ հայր իմ... (ծնգան վրայ կ'իջնայ) ո՛վ դիմ, ո՛յժ տուէ՛ք ինձ սա տազնապողական ժամոյս, զօրագուցէ՛ք զիս, որպէս զի երթամ հայրս ազատեմ: (Մտք կ'ելլայ, որպէս զի երթայ, Արտաւազդ մերս կը մտնէ)

ՏԵՍԻԼ Գ.

ՀԵԼԷՆԷ, ԱՐՏԱՒԱՅԻ

ԱՐՏԱՒԱՅԻ

Ո՛վ երկինք... Հելենէ, դու հոս և կը հառաչես:

ՀԵԼԷՆԷ

Արտաւազդ... (մեկուշի). Ինչպէս խոյս տալ այժմ:

ԱՐՏԱՒԱՅԻ (վազելով գիւղից կը գրկի)

Սիրեցեալդ իմ Հելենէ... ո՛հ, շնորհակալ եմ ձեզ, ո՛վ դիմ, որ զինք անգամ մ'ալ տեսնել ինձ կը շնորհէ, շնորհակալ եմ որ չ'ուզեցիք անմիտ թարման... Բայց միթէ երկինքն հոս ի՞նչ, հրեշտակդ իմ Հելենէ, որպէս զի քու սիրականիդ վերջին վայրկեանները քաղցրացրեն... ուրեմն չ'եմ խաբուիր դու հոս ես... իսկ ես զքեզ արդէն Հայաստանէն հեռու կը կարծէի:

ՀԵԼԷՆԷ

Ե՛ս խոյս տայի, երբ գիտէի որ դու հոս շղթայակապ բանտի մէջ ես:

ԱՐՏԱՒԱՅԻ

Ո՛հ, շնորհակալ եմ քեզ Հելենէ. սակայն տխուր ես, աչերուդ մէջ արտատունք կը շողան:

ՀԵԼԷՆԷ

Բնդհակառակն ուրախ եմ, Արտաւազդ. իսկ միթէ կրնամ տխուր ըլլալ, երբ քեզ աւետիս տալու համար հոս եկած եմ. լսէ՛ ապա թէ քիչ ատենէ... գուցէ այսօր սա շղթայքդ ձեռքէդ պիտի իյնան:

ԱՐՏԱՒԱՅԻ

Այո, երբ այսօր հոգիս սա մահկանացու մարմինս պիտի թողու:

ՀԵԼԷՆԷ

Ո՛չ, դու պիտի ապրիս, Արտաւազդ:

ԱՐՏԱՒԱՅԻ

Ե՛ս պիտի ապրիմ... խնդր օրիորդ, մի խաբեր զքեզ, իմ ձմեռ գուցէ արդէն տրուած է. այո, անգամ մ'ալ դեռ պիտի տեսնեմ արեգական լոյսը, անգամ մ'ալ տիեզերաց վրայ աչք մը պիտի ձգեմ, վերջին հրաժեշտի աչք մը, երբ բանտս թողով՝ գլխատման բեմին վրայ պիտի ելլամ:

ՀԵԼԷՆԷ

Ի բաց մերժեմ միտքդ այդ տխուր խորհուրդքը. կը կրկնեմ քեզ, թէ դու պիտի ապրիս, Արտաւազդ. գուցէ հայրդ այժմ ազատութեանդ հրովարտակը իւր հետ կը բերէ, և բանտիդ դուր բանալով՝ զքեզ գրկացնի մէջ պիտի ընդունի. Ահաւաստիկ գայտ գիտնալով կեայ հոս, որպէս զի քեզ աւետիս տամ... իսկ այժմ թո՛ղ տուր որ մեկնիմ, ինչու որ հատուցանելու ուրիշ պարտք մ'ալ ունիմ:

ԱՐՏԱՒԱՅԻ

Ա՛յդպէս շոյտ գիս կը թողու... ո՛հ, կեցիր, վայրկեան մ'ալ կեցիր, Հելենէ. գիտեմ ինչ վտանգ ձեզ կ'սպառնայ, սակայն միայն վայրկեան մը... իսկ ըսածդ անհնար է սիրեցեալդ իմ Հելենէ. կը ճանչնամ ես զծերակոյտն, կը ճանչնամ նաև հօրս հայրենեացն ունեցած կոյր հեղանգաւոր թիւնը: Իսկ ինչո՞ւ ինձմէ ծածկել ահաւոր իսկու թիւնը. կը վախեմ որ չըտկարանամ. ո՛հ, մի վախե՛ք, Հելենէ, նա գի և յանգապարտ եմ հայրենեացս դէմ իւր հրամանաց անհնազանդութեամբս, ուստի և արդարացի է իւր տուած պատիժն: Հայցս փոխանակ զիս ազատել աշխատելու, գիտեմ որ պիտի փութացրնէ վճռոյն գործադրութիւնը, որպէս զի ժամ մը առաջ աներևոյթ ըլլայ երկրիս վրայէն, իւր փառքը և անունը նսեմացընող դաւաճան և մատնիչ որդին: Այո, կենաց անարժան եմ ես, Հելենէ. այո, դաւաճան և մատնիչ մ'է քու սիրականիդ. այլ և ուրախ եմ միանգամայն, զի զքեզ ապրեցնելու համար այդ դիտողութեան շահեցայ, ուրախ եմ՝ չի զքեզ ազատելու համար անուշ, փառքս, ապառնիկ կորսընցնեմ և ընդ հուշ կենանքս ալ պիտի կորսընցնեմ: Ապա օրհնելով սա շղթայքս կը համբուրեմ, զորս քեզի համար կը կրեմ, սիրեցեալդ եմ Հելենէ:

ՀԵԼԷՆԷ

Սիրելի՛դ իմ Արտաւազդ...

ԱՐՏԱՒԱՅԻ

Մի լար Հելենէ, զի ոչ ոք կրնայ, խոյս տալ իւր ճակատագրէն: Ո՛հ, ինչ երջանկութիւն էր երբ իրարու քով նստած մեր ապագայի վրայ կը խօսէինք. անամպ և կապոյտ երկնից վրայ իբր թէ մեր ծիրանագոյն ապառնիկ կը կարգաւ:

յինք. առաւօտն գմեզ կը գտնար առուակին քով, իրարու սիրով յափշտակուած. արեւոյն վերջին ճառագայթքն ալ շատ անգամ մեր գլխոց վրայ խոնարհելով, իբր թէ ուզենային հոն ոսկեթել պսակ մը բորբոքելու: Ես կ'ըսէի «քեզ կը սիրեմ Հելէնէ», դու ալ ինձ «գթեզ կը սիրեմ Արտաւազդ», այնպէս որ, կարծես թէ մի և նոյն սիրով կը բողբոջէին այդ սիրուն խօսքն: Մի և նոյն գգաքմունք մեր սիրտերը կը թնդացընէր, մի և նոյն օդը կը շնչէինք. զիրար կը սիրենք ըսելու համար միայն մեր լրթունքն կը շարժէին: Բնուած թիւնն և երկինքը ալ ականջաւորք մեր սիրոյ երգմանց, թուէր թէ իրենք ալ գոհ էին՝ գմեզ երջանիկ տեսնելին. արեւն ալ ակամայ և գրեթէ բռնազատուած իւր վերջին ճառագայթքը կ'ամփոփէր: Ափսոս, թէ կրնար գուշակել, թէ այդպիսի յանկարծահաս մորիկ մը մեր բաղդը պիտի փոթորկէ... բաւական է. կը տեսնեմ որ անցեալին յիշատակն գմեզ առուել ևս կը տխրեցընէ... այլ միթէ քոյս չ'են և այժմ, սիրեցեալդ իմ Հելէնէ, միթէ ձեռքս ձեռքդ չ'են պնդեր, միթէ սա վայրկենիս մէջ որ գթեզ կը թողում, չ'եմ ըսեր քեզ դարձեալ «Հելէնէ գթեզ կը սիրեմ և քեզի համար կը մեռնիմ»: Այն շունչն որ գլխոյս անկման ատեն բերնէս դուրս պիտի սլանայ, պիտի չնչէ տիեզերաց առջև վերջին անգամ մ'ալ. «Հելէնէ գթեզ կը սիրեմ»: Ասկայն շափազանց խնդուածնէս մոռցայ քեզ հարցընելու՝ թէ ինչպէս հոս կը գտնուիս, և թէ ինչո՞ւ դեռ մեկնած չ'էք: Քիչ մ'առաջ հայրդ ալ տեսայ, խեղճն գիտ կը թափառէր, որպէս զի բանտ թողուով խոյս տամ իւր հետ... քան լիցի ինձ որ այնպիսի վատութիւն մը յանձն առնուիմ. սակայն զինքն յորդորեցի որ յաճմն ալ հոս չ'են գրեմ, ըսի իրեն, որ ժամ մը առաջ գթեզ հեռացընէր Հայաստանէն. վասն զի թէ որ յայտաւնուիք... ո՛հ անհրաժեշտ է ձեր մահն. այն ատեն իմ մահս ալ շատ դաւան պիտի ըլլայ, ինչու որ զձեզ նախ գլխատման բեմին վրայ պիտի տեսնեմ: Ա՛հ, ինչպէ՛ ինձ որ չըտեսնեմ այն աղէտալի վայրկեանը, սիրեցեալդ իմ Հելէնէ: Ապա այժմ որ տեսնուեցանք, այժմ որ վերջին հրաժեշտն իրարու տուինք, փախի՛ր Հելէնէ, փախի՛ր, եթէ զիս կը սիրես. թող որ գոհ և երջանիկ մեռնիմ, յիշելով որ դու կ'ապրիս, թէ զիս յիշող, ինձի համար աղօթող մը հոս կը թողում: Հա՛ պիտի մեռնեցէն ետե միթէ ազատ չ'եմ դարձեալ բնականութիւնդ մէջ. մեր մարմինը միայն իրարմէ կը գատեն, թէ կարող է մեր հոգին բաժնել իրարմէ, զի և անհնարին է. երկուքնիս մէջ հոգի ունիմք և մէկ սէր... օ՛հ ապա, զրկէ՛ զիս և փախի՛ր:

Լեւկէնէ

Ո՛ր ազնուագոյնն ի սիրականաց. այդպիսի գերեմական սիրայ մը առջև, որ վառն իմ իւր ամենաքաղցր անկախութիւնքը կը գտնէ. կրնայի՞ք վատի մը պէս վայրկեան մ'ալ կենաք ապրեցընելու մտածել... Ե՛ս գթեզ թողով փախչէի, առանց որ գտնէ ազատութիւնդ փորձէի. ի՛նչ արժէք կ'ունենայի յայնժամ առջևդ, այլ մա-

նաւանդ թէ ի՛նչ արժէք կ'ունենայի ես այսօր բուն իմ աչացս առջև... ապրէ՛ երջանկագոյն ապագայի մը համար, արժանաւոր սիրական. Հելէնէ ապերախտ չ'է, զիտէ ինչպիսի՞ն հոնի գլուխ մը կ'ազատէ՛ գթեզ ապրեցընելով. ապրէ՛ ուրեմն, սիրելիդ իմ Արտաւազդ, զի Հելէնէ գթեզ կ'ազատէ:

ԱՐՏԱՒԱԶԳ

Հելէնէ՛, չ'եմ ըմբռնէր ըսածդ. անաւստի այս երրորդ անգամ գայս ինձ կը կրկնես... արդարեւ պիտի ապրինք... բայց ի՛նչպէս... անկարելի է քեզ հատալ. յոյս խաբուսիկ... բացատրէ՛ միտքդ, Հելէնէ՛:

Լեւկէնէ

Գիտցի՛ր ապա Արտաւազդ... բայց ըրածս մի՛ մեղադրեր, ինչ որ ըրի՛ հարկն պահանջեց, նա զի և պարտքս էր... ուստի և չ'եմ զղջար և չ'եմ զանգատի՛ր բաղդին դէմ... մահաւանդ թէ ուրախ եմ և պէտք էր որ ընէ...:

ԱՐՏԱՒԱԶԳ

Ո՛վ դէք... ի՛նչ արդեօք պիտի ըսէ... այդ յառաջաբանութեամբդ զիս կը սոսկացընեմ, Հեւկէնէ... բայց խօսէ՛ շուտ...:

Լեւկէնէ

Գիտնալով որ մահդ անհաւանջելի էր և թէ քու փրկութեանդ իբրեւ զիդ՝ ծերակոյտն հօրս և կամ իմ գլուխ կը պահանջէր...

ԱՐՏԱՒԱԶԳ

Ա՛հ, կը դողամ... մազերս գլխոյս վրայ կը տնկուին... ուրե՛մն...

Լեւկէնէ

Դերակուտին պահանջն պիտի կատարուի. այսօր իմ գլուխ պիտի իյնայ հրապարակաւ, և դու ալ ազատ ես, Արտաւազդ:

ԱՐՏԱՒԱԶԳ

Ի՛նչ կը լսեմ... ես պիտի ազատիմ, երբ դու կը մեռնի՛ս... գայս ըսի՛ր այնպէս չ'է՛... ո՛հ, ինչ դաւաճանութիւն... բայց անկարելի է, Հելէնէ... թող որ մեռնիմ խաղաղութեամբ:

Լեւկէնէ

Հօրդ բերնով ծերակուտին խոստացայ իմ գլուխս. ուստի պէտք է որ փութամ... արդէն շատ ալ ուշացայ. դարձեալ պէտք է որ հայրս ալ ազատեմ, որն որ պահ մը տկարութենէս օգտու քաղելով, վաղեց զինքն իմ տեղս զոհելու. ապա կը տեսնես, որ հոս կենալս անկարելի է... ո՛ղ. Համբ միտս, Արտաւազդ (Մեկնի՛ր կ'ոչդէ)

ԱՐՏԱՆԱԶԴ (գիւրջը արգիւելով)

Ձէ՛ չիպիտի թողում որ երթաս... ո՛հ ան-
խնկըս, եթէ գտնու հոս արգիւել, հայրդ հոն պիտի
գլխատուի և գուցէ գտնու ալ վերջը պիտի սպա-
նեն... Ի՛նչ ընել այժմ, ո՞վ երկինք... օ՛հ գնա՛
գտիր շուտ հայրդ, թերևս դեռ ժամանակ կայ-
րսէ՛ իրեն իմ կողմանէս, թէ այդ է իմ կամքս,
և գիշերս ձեզ օգնական անելով խոյս տուէ՛ք
սրկից։ Զոր հաւատարմի բարեկամներէն ոմանք
ձեզ պիտի առաջնորդեն։ Ո՛հ, գուցէ վայրկեան
մ՛ալ ուշանալդ կընայ բոլոր ակնկալութիւնս
ի դերեկ հանել... սակայն գտնու թողլու ալ չ'եմ
համարձակիր։

ԼԵԼԻՆԵ

Խօսիկ ըրէ, Արտաւազդ. հայրս գուցէ այժմ
դանձաք ձեռքն է... ես միայն կընամ գիւրքն
ապատել՝ կենակըս իւր տեղ նուիրելով... Թող
ապա որ ճակատագիրս կատարուի... ողջամբ
մնաս, սիրելիդ իմ Արտաւազդ։ (Դարձեալ մեկ-
նի կը խնդրէ)

ԱՐՏԱՆԱԶԴ (գիւրքն արգիւելով)

Ա՛հ, կեցիր... դժբաղդ Արտաւազդ. կը գու-
շակէիր երբէք, թէ մեռնելդ առաջ քան գմահ
աւելի սաստիկ այդպիսի հարուած մը քու սիրտդ
պիտի մտուէր... Թշուառական... այժմ կ'անի-
ծեմ սա շղթայքս, որք ձեռքս կը պնդեն, սա
շղթայքս գորս քիչ մը առաջ կ'ամբողջելով
կ'օրհնէի։ այ՛ն, կ'անիծեմ, վասն զի կարող չ'եմ
գիտ սպանելու... սակայն փոյթ չէ... եթէ սուր
մը չ'ուռիմ ձեռքս մէջ, գլուխդ սա օղակներուն
վրայ պիտի փշրեմ։

ԼԵԼԻՆԵ

Արտաւազդ, թող սուր որ մեկնիմ... Բայց
միթէ այսչափ ասելի՞ք իմ քու քեզ կենաքդ,
երբ զայն ձեռքէս կ'ընդունիս։

ԱՐՏԱՆԱԶԴ

Այ՛ո, երբ զայն քու մահուամբ կ'ստանամ։

ԼԵԼԻՆԵ

Ուրեմն կ'ուզե՞ս զիս զրկել այդ շնորհքէ...
կարծես թէ չ'էի՞ ուզէր ապրիլ հետդ... սակայն
երբ քու մահդ անհրաժեշտ էր և քու կենաքիդ
փրկութեան մի միայն միջոց՝ իմ և կամ հօրս
մահն էր. ապա ընդդէմդ գմահ երբ հետդ ապրելն
անհնար էր։ Դու իսկ տուիր ինձ, Արտաւազդ
այդ դիցազնական օրինակը. նա զդ քու կենաքդ
հարկաւոր է հայրենիքէն և հօրդ պիտանի. ընդ-
հակառակն ինձի պէս տկար և արդէն թշուառ,
խեղճ օրիորդի մը կենաքն՝ ծնած օրէն ի վեր
դաշտից խոտերուն պէս չորնալու դատապար-
տուած էր։ Ապա թող, որ հետս տանիմ գերեզ-
մանիս մէջ այն միթիթութիւնը, թէ իմ մա-
հումբս, թէ զգե՛ք ապրեցնելովս՝ ծառայու-
թիւն մը կ'ընեմ Հայաստանեայց։ Ո՛հ, մի՛ տխրիր,
Արտաւազդ, ի բաց մերժէ սա խաւարամած ամպը

որ ճակատիդ վրայ դարած է. ո՛հ, ցըցուր միւս-
անգամ ժպիտդ, ըսէ՛ ինձ վերջին անգամ մ՛ալ.
Հեղինէ՛, գտնու կը սիրեմ...

ԱՐՏԱՆԱԶԴ

Ա՛հ, դժբաղդ Արտաւազդ...

ԼԵԼԻՆԵ

Կը կարծես թէ մահուանէս վերջը գտնու պիտի
թողում... Ի՛նչ հրապարք երկինք մէջ զիս կընան
արգելուի... Ե՛ն, ո՛չ... զի հոգիս անբաժանելի
պիտի մնայ քնէ. պատերազմի վատնաք մէջ
քու առջիկ կանգնելով, ի բաց պիտի հեռացը-
նեմ համացու հարուածքը, և իրիկունը քովդ
նստած՝ անուշ և լռիկ խօսակցութեամբս պիտի
ջանամ մոռցնելու մէջ քեզ անցեալ վիշտերդ. իսկ
գիշերներն ալ սնարիդ քովս անկնկալորջ՝ չիպի-
տի թողում, որ անաւոր անուրջք քեզ մտնենա-
լով, անհանգիստ ընեն գտնու... Բայց դու զիս
չ'ես լսեր, Արտաւազդ...

ԱՐՏԱՆԱԶԴ

Ապրիլ և միշտ ի խոր ծերութիւն տիեզերաց
առջև ճակատիդ վրայ կրիլ մատնելի և դաւա-
ճանի բիծը... ապրիլ, երբ երախայք անգամ
իրենց մօրն զիս մատնանիջ ցուցնելով՝ պիտի
թողնեն «անձ մատնելի, անձ դաւաճանը»...
ան, ի՛նչ վատ և անարգ կենաց զիս դատապար-
տեցիր, Հեղինէ. այդ էր սիրոյս հատուցում...
ուզեցիր զիս անպատուել, երբ արեւն զիս կը
սրբէր... թող զիս և մեկնէ՛ աստի, հեքացեալ
օրիորդ։

ԼԵԼԻՆԵ

Արտաւազդ... դու ես որ հետս այդպէս կը
խօսիս... այլ կը ներեմ քեզ, բարեկամ... արդ
չ'ես տեսներ, որ ժաման չ'եմ սիրողդ. այ՛ն, երբ
փափաքիմ, որ զիս ասես. որպէս զի մեռնելէս
վերջը կսկիծ մը, ցաւ մը չ'զգաս... կը մաղ-
թեմ ալ որ երջանիկ ըլլաս։ Իսկ անձ որ զիս
կը յանդիմանես անիրաւաբար, ստոյգ եմ որ
մեռնելէս վերջը պիտի գաս երբեմն գերեզմանիս
վրայ, քանի մը կաթիլ արտաւազ թափելով
ըսել «թէ Հեղինէ բարի աղջիկ մ'էր»։ Զայժմամ
փոսիս խորէն ես ալ պիտի պատասխանեմ «Ար-
տաւազդ, գտնու միջոց կը սիրեմ, և գոհ եմ որ
քեզի համար միտայ»։

ԱՐՏԱՆԱԶԴ

Ի՛նչ էր ըսածս, ո՞վ երկինք. ի՛նչ ըրիր, վատ
Արտաւազդ. սա անմեղ օրիորդն քեզ կենաք տա-
լու համար զինքն կը զոհէ, իսկ դու խիտ և
անարդար բանիւք զինքն յառաջագոյն կը մա-
հացնես... հը՛չ ես դու ապերախութեան...
ան, ներք ինձ, Հեղինէ. (ծնցաւ վրայ կ'իջնայ)
անիրաւեցայ անարդար կշտամբանքս. ես հո-
ղիզեմ արարած մը՝ քեզի պէս հրեշտակի մը
առաքինութեանը չընդհանր դժբաղնիւ. սիրոյս
առաւելութիւնն... Բայց դու՛ զից սիրոյն արժա-
նի էիր մանաւանդ... արդ ըսածներս մի՛ յիշեր,

սիրեցեանդ իմ Հելէնէ... ահ, ինչո՞ւ կայծակ մը
զիս մէկէն չըլանի՞նք... դի՛ր աղաչեմ ձեռքդ
զլիսոյս վրայ, ահաւաստիկ հոս, որպէս զի գիտ-
նամ, թէ ինչ կը ներս... կ'զգամ որ խաղաղու-
թիւնն դարձեալ սրտիս մէջ կ'իջնայ... ահ, շնոր-
հակալ եմ, շնորհակալ եմ քեզ, Հելէնէ:

Հելէնէ

Ո՛ւրք ելիր, սիրելիդ իմ Արտաւազդ, կը հաւ-
տան որ քեզ նեղանամ... քայքայ ահաւաստիկ բան-
տին դուռն կը ճռնչէ, անշուշտ զքեզ ազատելու
եկած են... ահ, կը ստակամ, գուցէ հոս ուշանա-
լով՝ արդէն հոն հայրս գլխատուած է... ահ
հայր իմ... հայր իմ...

ԱՐՏԱՒԱԶԴ

Թո՛ղ զան այժմ, ալ երկիւղ մը չ'ունիմ. որով-
հետեւ հայրդ մեռած է կ'ըսես և դու մեռնիլ կը
խնդրես, ես ալ հետդ կը մեռնիմ... այո՛, գի-
տեմ ինչ ծիրակուտին և հօրս պիտի ըսեմ:

Հելէնէ

Արտաւազդ... (դուռը կը բացուի)

ՏԵՍԻԼ Դ.

ԱՐՏԱՒԱԶԴ, ՀԵԼԵՆԷ, ԱՐԴՈՒԱՐԴ, ՆԵՌ-
ՊՏՂՈՄԵՆՍ, ԱՐԻԱԹԵՆ, ԼԻԱՆՏ, ԼԱՅ
ԶՕՐԱԿԱՆՔ ԶԱՆՆԵՐՈՎ

Հելէնէ (հայրը տեսնելով խնդրեամբ մեկուսի)

Դեռ ողջ է ուրեմն հայրս... շնորհակալ եմ ձեզ,
ո՛վ դի՛ր:

ԱՐԴՈՒԱՐԴ (վազելով Արտաւազդայ շրջայքը կը
քակէ)

Ուրախ լեր, Արտաւազդ, այսուհետեւ ազատ ես:

ԱՐՏԱՒԱԶԴ

Ո՛չ հայր իմ. գիտէի որ զիս ազատելու պիտի
գաս և թէ ինչ գինով ծերակոյտն կեանքս կը
շնորհէ. սակայն դիտքիդ, հայր, որ այդ պայմա-
նաւ ինչ շնորհուած կեանքը կ'անարգեմ և կը
մերժեմ ես: Իսկ ինչո՞ւ ինչ կը ներէ, ես որ յան-
ցապարտ եմ հայրենեացս և քեզի դէմ, մինչդեռ
անմեղ եմ պիտի գլխատուի: Ապա թո՛ղ տուր
որ դահինք զիս ալ. Հելէնէի հետ մնոցընէ...

Հելէնէ

Զիս միայն, տէ՛ր իշխան...

ԱՐՏԱՒԱԶԴ

Իմ մահս՝ զքեզ անպատիւ գործ մը և ոճիւր մը
գործելէ կ'ազատէ. զի կեանքըս քու անուանդ
յաւիտենական նախտոհինք մը պիտի ըլլայ:

ԱՐԴՈՒԱՐԴ

Որդի՛ իմ Արտաւազդ, հայրդ եկած է որպէս
զի զձեզ ամենքիդ ալ ազատէ:

Հելէնէ (և Արտաւազդ միաստեղ)

Ամենքնի՛քս ալ...

ԱՐԴՈՒԱՐԴ

Ա՛յո, Հելէնէ՛, հայրդ ալ ազատ է:

Հելէնէ (խնդրեամբ հօրը ժողը նետուելով)

Հայր իմ...

ՆԵՌՊՏՂՈՄԵՆՍ (զհիւքը գրկելով)

Ա՛յո, Հելէնէ, ստոյգ է Արդուարդ իշխանապե-
տին ըսածն. ծերակոյտն մեզ կը ներէ:

ԱՐՏԱՒԱԶԴ

Խիբրակոյտն... իսկ ուսով՝ այդ անակնկալ
հրաշքն:

ԱՐԴՈՒԱՐԴ (Արտաւազդի թուղթ մը տալով)

Ա՛յո և անձամբ կարճա ծերակուտին հրո-
վարտակը:

ԱՐՏԱՒԱԶԴ (կը կարդայ)

«Տէ՛ր իշխան, ծերակոյտն որ երախտագէտ
«հայրենիքը կը ներկայաջընէ, ի շնորհս հայրենա-
«սիրութեանը և մահաւանդ թէ որդեական
«հնազանդութեանը, իւր խիստ վճիռը յետս կը-
«յելով՝ կը ներէ որդւոյդ, մահազամայն Նէո-
«պտղոմէոս իշխանին և Հելէնայ. դարձեալ
«քու հօր և պաշտպանողական աշիկ կը յանձնէ
«Հայաստանի կառավարչութեան սանձը: Քու
«հայրենասիրութիւնդ և հնազանդութիւնդ, տէ՛ր
«իշխան, նմանելու օրինակ ըլլան ամենայն
«Հայոց, և իւրաքանչիւր Հայ քեզ նայելով սով-
««րի ծառայել հայրենեաց, և գիտելով թէ իւր
«ինչքը, իւր կեանքը, իւր որդիքը և թէ ինչ
«որ ունի սիրելի աշխարհքիս մէջ, ի ստիպել
«հարկին՝ պարտական է նսրիւր հայրենեաց: Ե-
«կեցցեն հայրենիք, որ նաև իւր որդւոց ապերախ-
«տութիւնը անխիշախարութեամբ կը ներէ: Իսկ
«դու, հայր իմ, վերստին գիտ կը ծնանիս, վասն
«զի այսօր կեանքս, և որ անելի սիրելի և թան-
«կագին է ինձ առաքինութեամբն չքնաղ Հելէնէ
«օրիորդը ի շնորհս քո կ'ընդունիմ:

ԱՐԴՈՒԱՐԴ

Ամենքնի՛քս ալ այսօր պարտական ենք շնոր-
հակալ ըլլալու Հայաստանեայց, ես լառաշաղկոյն,
վասն զի որդիս ինձ միւսանգամ կը պարգեւէ.
դու ալ, Արտաւազդ, վասն զի հայրենիք կեան-
քիդ հետ՝ զՀելէնէ օրիորդն ալ քեզ կը շնորհեն.
դու, Նէոպտղոմէոս իշխան, դու ալ կեանքդ և

դուստրդ Հայաստանէն կ'ընդունիս. դու ալ Հեւլէնէ, դու ալ մասնաւորապէս պարտական ես Հայաստանեայց:

ԼԵԼԻՆԷ

Ձայս կը խոստովանիմ, տէր իշխան. իսկ որովհետեւ Հայաստան այսօր իմ հայրենիքս պիտի ըլլայ, այժմ բոլոր կեանքս իրենն է:

ԱՐԻՈՒԱՐԻ

Ապա իշխանդ Նեոպոլիտոս, ի բաց թողով հին ասելութիւնդ, երդունցիքդ այսուհետեւ հաւատարիմ և անխաբարի բարեկամ ծառայող Հայոց. անշուշտ կը յիշես, թէ այդ պայմանաւ միայն ծերակոյտն քեզ ներեց:

ՆԵՈՊՈԼԻՏՈՍ

Հայոց հայրենասիրութեան այդպիսի սքանչելի և վսեմ օրինակները տեսնելով, և Հայաստանեայց ինձ հատուցած շնորհացն փոխարէն, ես ալ հին ասելութիւնս և քէնս կը մոռնամ. դարձեալ կ'ուխտեմ անկեղծ հաւատարմութիւն և հնազանդութիւն: Իսկ որովհետեւ բախտն այսօր մեր երկու որդիքն ալ սուրբ կապով մը իրարու կը լծորդէ, ես ալ կը փափաքիմ ըլլալ այսուհետեւ քաղաքացի Հայաստանեայց:

ԱՐԻՈՒԱՐԻ

Կ'ընդունիմ ինդիքդ և կը խոստանամ, որ այդ իրաւունքը ծերակոյտն քեզ պիտի շնորհէ:

ԱՐՏԱՒԱՅՐ

Ո՛հ, օր ցնծալից... ուրեմն այսուհետեւ ամենքն ինչ միատեղ մէկ ընտանիք պիտի կազմենք...

ԼԵԼԻՆԷ

Իսկ իմ պարսքս, տէր իշխան, պիտի ըլլայ լինել արժանի հարս Հայկազանց. դարձեալ պիտի աղաչեմ զդիս, որպէս զի այնպիսի որդւոց զիս մայր վիճակէն, որոնք կարենան օր մը իրենց հօրն առաքինութեանցն նմանիլ:

ԱՐԻՈՒԱՐԻ

Երթանք ի տաճարն՝ շնորհակալ ըլլալու դից, նախ մեր ազատութեան համար և վերջը մեզ հատուցած երախտեացն փոխարէն: Իսկ այսօրուան դէպքն, թող անհղծանելի կերպիւ քան դակուին իւրաքանչիւր Հայ սրտի մէջ:

ՍԵՓՈՒՆ ՄԻՆԱՍԵԱՆ

ՎԵՐՋ

ՋԻՆՈՒՈՐ ՆՍ

Ջ

Հասակ ունիմ հսկայի

Ամեն մարդ ինձ կը նայի.

Ուրեքս գետին կը թընդայ

Փշրածներս են կուռ շղթայ:

Կ'ըսեն ինձի՝ ել հանդէս,

Հայաստանի զինուոր ես:

Խուլ մագերես իմ զանգուր

Կու տան ճակտիս միշտ համբոյր.

Աղեղ յօնքերս իմ կամար,

Կը կոտիմ ես խիստ յամառ:

Կ'ըսեն ինձի՝ վարդ երես,

Հայաստանի զինուոր ես:

Կապոյտ աշերս զոյգ զնդակ

Սիրտըս անշէջ վառ կրակ,

Սուր ակուանիս կը ճընտն:

Բերանէս հուր կը ժայթքեն:

Կ'ըսեն ինձի՝ բոց երես,

Հայաստանի զինուոր ես:

Կուրծքս վահան երկաթէ

Մէջքիս սուրը պողպատ է,

Ձեռքս հրացան երբ պատրաստ,

Թշնամիներս հեզ, զգաստ:

Կ'ըսեն ինձի՝ հիմնապէս

Հայաստանի զինուոր ես:

Ալեծածան հայ դրօշակ,

Տես, ամեն կողմ հուր, կայծակ,

Ուր գնդացիք, թնդանօթ,

Հոն հայ զինուոր ու վառօդ,

Ինչու ըլլամ իսկապէս

Հայաստանի զինուոր ես:

Սէր, միութիւն՝ հայուն ուժ.

Անհետ կ'ընէ ամեն խուժ.

Դափնի պսակ հայ քաջին

Ազատասէր մեր ազգին:

Խաղաղութեան եմ զինուոր,

Հայրենիքիս փառաւոր:

Գ. ԳՈՒԽ-ԲԵՐԱ

10 Յուլ. 1920

ՎԱՆԱՐ Թ. ՄԱՐԿԱՐԵԱՆ

ԱՂ. ՄՈՐԱՍՏԵԱՆՈՎ ՎԱՐՓԱՐԱՄԻՈՎ

Փարիզու.